# «Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցման իրականացման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

___________2017թ.**№ ______Ն**

**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԴԻՏԱՆՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 19-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում դիտանցման իրականացման կարգը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 5-ից:

**Հավելված**

**ՀՀ կառավարության 2017 թվականի**

**_____________ -ի № _______-Ն որոշման**

**Կ Ա Ր Գ**
**ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ ԴԻՏԱՆՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են ընդերքօգտագործման թափոնների օբյեկտներում (այսուհետ՝ օբյեկտ) դիտանցում իրականացնելու հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի դրույթները տարածվում են այն ընդերքօգտագործողների վրա, որոնց գործունեության հետևանքով առաջացել են ընդերքօգտագործման թափոններ:
3. Դիտանցումը ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների նկատմամբ պարբերաբար իրականացվող գործողությունների համակարգն է, որն իրականացվում է ընդերքօգտագործողի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:
4. Օբյեկտների դիտանցման նպատակն է՝

1) օբյեկտների անվտանգության և կայունության պահպանումը.

2) հնարավոր ռիսկերի  բացահայտումն ու նախազգուշացումը.

3) օբյեկտների պահպանման և դրանց հնարավոր վթարների օրինաչափությունների ուսումնասիրությունը.

4) օբյեկտների գոյատևման կարճաժամկետ ու երկարաժամկետ կանխատեսումների համար տվյալների հավաքագրումը և վերլուծությունը.

5) օբյեկտների ռիսկայնության աստիճանի գնահատման մասին հենակետային տվյալների ստացումը.

6) օբյեկտների վերաբերյալ օպերատիվ տվյալների հավաքագրումը, մշակումը և ամփոփումը.

7) ամփոփ տվյալների հիման վրա առաջարկությունների և կանխարգելման միջոցառումների պլանի մշակումը և իրականացումը:

5. Դիտանցումը իրականցվում է հետևյալի օբյեկտների նկատմամբ՝ պոչամբարների, լցակույտերի, ինչպես նաև պոչամբարների և լցակույտերի կամ դրանց ազդեցության տարածքների՝ մակերևութային և ստորերկրյա ջրերի, մթնոլորտային օդի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ:

**ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄԸ**

6. Պոչամբարների դիտանցման մշտական ռեժիմով անհրաժեշտ է հետևել պոչամբարի կառուցվածքների և նրա տարրերի վիճակներին, նշելով ֆիլտրացիայի օջախները, փլուզումները, փլվածքները, նստվածքները, նստեցումները, ճեղքերը, լվացված տեղերը, խյուսի և կեղտաջրերի արտահոսքի տեղերը:
7. Պոչամբարների կառուցվածքների վիճակի որակական դիտանցման իրականացման համար շահագործող կազմակերպությունը պետք է տեղադրի հսկիչ-չափիչ սարքեր, ապահովի դրանց պահպանվածությունը և զարգացնի այն: Շարքից դուրս եկած սարքավորումը հնարավորին չափով ենթակա է փոխարինման, իսկ նոր տեղադրվող սարքավորումը պետք է ապահովի անհրաժեշտ տեղեկատվության ստացումը:
8. 25 տարուց ավելի շահագործման մեջ եղած պոչամբարների կառուցվածքները, անկախ դրանց վիճակից, 5 տարին մեկ անգամ պետք է ենթարկվեն համալիր վերլուծության՝ ամրության, կայունության և շահագործման հուսալիության գնահատումով: Կառուցվածքների նյութերի ու դրանց հիմքերի փաստացի ֆիզիկամեխանիկական բնութագրերի հիման վրա, անհրաժեշտության դեպքում (նախավթարային վիճակի նշանների առկայության) կառուցվածքները արտահերթ կարգով վիճակի համալիր վերլուծության են ենթարկվում:
9. Պոչամբարների շահագործման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել դիտանցում՝

1) պոչամբարում ջրի մակարդակների նկատմամբ,

2) հեղուկի մակարդակից պատնեշի կատարի բարձրության գերազանցման նկատմամբ,

3) լողափային շեպերի վիճակի նկատմամբ,

4) ողողալցման նախագծին պոչամբարի տարածքի համապատասխանության նկատմամբ,

5) խյուսատարի և ցամաքուրդի (դրենաժի) համակարգի նկատմամբ,

6) տարվա չոր ժամանակաշրջանում տղմարանների փոշեզատման նկատմամբ,

7) պոչամբարի հարակից տարածքի ջրահոսքերում, խմելու ջրի ջրամատակարարման համակարգերում և ստորերկրյա ջրերում ագրեսիվ ջրերի հայտնվելու նկատմամբ,

8) տղմազտիչների և հեղուկ թափոնների ամբարների նկատմաբ,

9) արգելափակող սարքվածքների վիճակի, հեղուկի մակարդակից կատարի բարձրության գերազանցման նկատմամբ,

10) անձրևային և հալոցքային ջրերի որսման ու հեռացման համակարգի նկատմամբ,

11) հակածծանցող, ջրամերժ կառույցների (էկրանների, սեպերի, պատնեշների) նկատմամբ,

12) տղմազտարանների ու պահեստարանների տարածքից հեղուկ թափոնների դուրս թափանցման հնարավորությանը հետևող հսկիչ-չափիչ սարքավորման աշխատանքի նկատմամբ,

13) շահագործման և կառուցվածքների վիճակի բացահայտված խախտումների շտապ վերացման, ինչպես նաև հետագայում դրանց նախազգուշացման և բացառելու ուղղությամբ:

## ԼՑԱԿՈՒՅՏԵՐԻ ԴԻՏԱՆՑՈՒՄԸ

10. Լցակույտերի ձևավորումը, շահագործումը և պահպանումը պետք է իրականացվի նախագծի համաձայն:
11. Լցակույտերում իրականացվում է դիտանցում՝

1) թեքությունների վրա տեղադրված լցակույտերի սողալը կամ փլուզումը կանխարգելող միջոցառումների կատարման նկատմամբ,

2) լցակույտերում մակերևույթային կամ հանքախորշային ջրերի ներթափանցման կանխարգելմանն ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ,

3) լցակույտերից գրունտային, հեղեղատային և անձրևային ջրերի հեռացմանն ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ,

4) լցակույտերի թեքություններում, հիմքի մոտակայքում և տրանսպորտային միջոցների բեռնաթափման տեղերում մարդկանց գտնվելը կանխարգելող նշանների կամ գրառումների  առկայության նկատմամբ,

5) ապարների  լցակույտերի աստիճանահարթակների և բարձրության, կտրվածքների և բերմաների անկյունների, լցակույտային աշխատանքների ճակատի շարժի արագության նախագծին համապատասխանության նկատմամբ,

6) լցակույտերում  վթարների և վտանգավոր միջադեպերի կանխման, նախագծով նախատեսված կանխարգելիչ միջոցառումների կատարման նկատմամբ,

7) լցակույտերի ազդեցության տարածքի ջրահոսքերում, մակերևութային և ստորերկրյա ջրերում ագրեսիվ ջրերի հայտնվելու նկատմամբ:

12. Իրականցվում են փոշեզատման, վթարների, միջադեպերի և դժբախտ պատահարների տեխնիկական պատճառների ուսումնասիրություններ և ներկայացվում առաջարկություններ այդ պատճառների վերացման

համար:
13. Լցակույտերում դիտանցումն իրականացվում է ամենօրյա ռեժիմով:

## ԴԻՏԱՆՑՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ և ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Ստորերկրյա ջրերի նկատմամբ դիտանցումը իրականացվում է թափոնների տեղադրման օբյեկտներում (պոչամբարում, լցակույտերում, տարալվացման կույտերից ձևավորված լցակույտերում, խարամակուտակիչներում և այլն) և դրանց ազդեցության տարածքներում:
15. Ստորերկրյա և ցամաքուրդային ջրերի նկատմամբ դիտանցումը իրականացվում է դիտողական ջրհորներում և հորատանցքերում, որոնք տեղադրված են անմիջական օբյեկտում, իսկ եթե այդպիսին հնարավոր չէ՝ ազդեցության տարածքում, կանխատեսվող աղտոտման գոտու շրջանակներում:
16. Դիտողական ջրհորերի և հորատանցքերի քանակը որոշվում է նախագծային փաստաթղթերով՝ կոնկրետ տվյալ օբյեկտի համար, հաշվի առնելով տարածքի ռելիեֆի և ջրերկրաբանական պայմանների բարդության աստիճանը:
17. Դիտողական հորատանցքերի և ջրհորների ցանցում պետք է նախատեսվեն հորատանցքեր նաև ստորերկրյա ջրերի վրա վնասակար ազդեցության գոտու սահմաններից դուրս, ստորերկրյա ջրերի բնական հոսքի շարժման վերին և ստորին հոսանքներում:
18. Կույտային տարալվացման հարթակների շահագործման ժամանակ պետք է նախատեսվի նաև վերահսկիչ-ցամաքուրդային հորատանցքերի տեղադրում՝ ստորերկրյա ջրերի շարժման ուղղությամբ:
19. Տեխնոլոգիական լուծույթների վթարային ներծծումային ստորերկրյա արտահոսքի դեպքում վերահսկիչ-ցամաքուրդային հորատանցքերից իրականացվում է աղտոտված ջրերի արտամղում և դրանց վերադարձը կույտային տարալվացման տեղամասի կեղտաջրերի կուտակման միջանկյալ տարաներ:
20. Օբյեկտներում դիտանցում իրականացնող ընդերքօգտագործողները պարտավոր են՝

1) ապահովել դիտողական հորատանցքերի և ջրհորների տեխնիկական անխափանությունը  և գործիքային հագեցվածությունը, ներառյալ ջրի արտամղման և նմուշարկման համար պոմպային սարքավորումներով,

2) աշխատանքային վիճակում պահպանել, այդ թվում նաև անհրաժեշտ վերանորոգման միջոցով, դիտողական հորատանցքերը և ջրհորները,

21. Ստորերկրյա ջրերի նմուշարկման ժամանակ իրականացվում է նախնական արտամղում մինչև կախված նյութերի դուրս բերումը և հետագայում ջրատար հորիզոնում ջրի մակարդակի վերականգնումը:

## ԴԻՏԱՆՑՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ և ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

22. Մակերևութային ջրերի նկատմամբ դիտանցումը իրականացվում է թափոնների տեղադրման օբյեկտներից դուրս հոսող բոլոր ջրերի հանդեպ, ինչպես նաև դրանց բեռնաթափման գետերում, լճերում, արհեստական ջրամբարներում և այլն:
23. Դիտողական կետերի քանակը որոշվում է նախագծային փաստաթղթերով կոնկրետ տվյալ օբյեկտի համար, հաշվի առնելով տարածքի ռելիեֆի և ջրաբանական պայմանների բարդության աստիճանը:
24. Դիտողական կետերի ցանցում պետք է ստեղծվեն կետեր, որոնք տեղադրվում են օբյեկտներից հոսող ջրերը մակերևութային ջրերի խառնման տեղից բնական հոսքի շարժման վերին և ստորին հոսանքներում:
25. Օբյեկտներում դիտանցում իրականացնող ընդերքօգտագործողները պարտավոր են՝

1) ապահովել դիտողական կետերի տեխնիկական անխափանությունը և գործիքային հագեցվածությունը,

2) աշխատանքային վիճակում պահպանել, այդ թվում նաև անհրաժեշտ վերանորոգման միջոցով, դիտողական կետերը

26. Մակերևութային ջրերի դիտողական կետերում իրականացվում է ջրի ծախսի, ընդհանուր հանքայնացման չափում և որակական հատկանիշների որոշում:
27. Օբյեկտներից դուրս հոսող կեղտաջրերի մաքրման կայաններում իրականացվում է դիտանցում ինչպես կայան մտնող, այնպես էլ դուրս հոսող ջրերի հանդեպ:
28. 28. Յուրաքանչյուր կոնկրետ օբյեկտի համար մակերևութային և ստորերկրյա ջրերի համար որոշվում է նաև այն չափորոշիչները, որոնք կարող են դառնալ աղտոտման աղբյուր կամ ենթարկվել աղտոտման ազդեցության: Այդ չափորոշիչների ցանկը կազմվում է նախօրոք, նախագծման փուլում:
29. 29. Ընդերքօգտագործողները օբյեկտում մակերևութային կամ ստորեկրյա ջրերի հանդեպ դիտարկումներն իրականացնում են՝ անվտանգ լցակույտերում չորս ամիսը մեկ անգամ, տարալվացման հարթակներից առաջացած լցակույտերում և պոչամբարներում ամիսը մեկ անգամ, այդ թվում՝ նաև հորատանցքում կամ ջրհորում ջրի առավելագույն և նվազագույն մակարդակների ժամանակ:
30. Ընդերքօգտագործողները յուրաքանչյուր օբյեկտում մակերևութային և ստորերկրյա ջրերի ֆոնային չափորոշիչներից որևէ մեկի էական շեղումներ հայտնաբերելու դեպքում դիտարկումներն իրականացվում են ուժեղացված ռեժիմով, որի պարբերականությունը որոշում է ինքը:
31. 31. Դիտանցման արդյունքում յուրաքանչյուր օբյեկտի համար ստեղծվում է տվյալների բազա՝ շտեմարան, որտեղ պարբերաբար գրանցվում են դիտարկման արդյունքները: Կազմվում են

մակերևութային կամ ստորերկրյան ջրի ծախսի, մակարդակի կորեր և այլ գրաֆիկական պատկերներ, որտեղ արտացոլվում են տվյալ օբյեկտին յուրահատուկ չափորոշիչների փոփոխման առանձնահատկությունները:

32. Ստորերկրյա և մակերևութային ջրերից վերցված նմուշներում պետք է որոշվի աղյուսակ 1-ում նշված չափորոշիչները:

**Ստորերկրյա և մակերևութային ջրերի որակական չափորոշիչները**

Աղյուսակ 1

| Ցուցանիշի անվանումը | Պարունակությունը մեկ լիտրում | | | ՍԹՔ |
|---|---|---|---|---|
| | մգ/լ | մգ-էկվ | մգ-էկվ, % | |
| Նատրիում, $Na^{+}$ | | | | |
| Կալիում $K^{+}$ | | | | |
| Ամոնիում, $NH_4^{+}$ | | | | |
| Կալցիում, $Ca^{2+}$ | | | | |
| Մագնեզիում, $Mg^{2+}$ | | | | |
| Երկաթ, $Fe^{++}$ | | | | |
| Երկաթ, $Fe^{+++}$ | | | | |
| Կադմիում, $Cd^{++}$ | | | | |
| Քրոմ, $Cr^{++}$ | | | | |
| Կապար, $Pb^{++}$ | | | | |
| Սնդիկ, $Hg^{++}$ | | | | |
| **Ընդամենը, կատիոններ՝** | | | | |
| Սուլֆատ, $SO_4^{2-}$ | | | | |
| Քլորիդ, Cl- | | | | |
| Նիտրիտ, $NO_2^{-}$ | | | | |
| Նիտրատ, $NO_3^{-}$ | | | | |
| Հիդրոկարբոնատ, $HCO_3^{-}$ | | | | |
| Յոդ, $I^{-}$ | | | | |
| Բրոմ, $Br^{-}$ | | | | |
| Ֆտորիդ, $F^{-}$ | | | | |
| Հիդրոսուլֆիդ $HS^{-}$ | | | | |
| Կարբոնատ $CO_3^{2}$- | | | | |
| Հիդրոարսենիտ $H_2 AsO_4^{2-}$ | | | | |
| **Ընդամենը, անիոններ՝** | | | | |
| Ընդհանուր հանքայնացում | | | | |
| pH | | | | |
| **Չդիսոցվող մոլեկուլներ՝** | | | | |
| Մետաբորաթթու $HBO_2$ | | | | |
| Ծծմբաջրածին ընդ. ($H_2S$+HS) | | | | |
| Սիլիկաթթու, $H_2 SiO_3$ | | | | |

Արսենաթթու $H^3$ $AsO^3$ կամ $H_3AsO^4$

Ածխածնի երկօքսիդ $CO_2$
Ցիանիդներ
**Ֆիզիկական հատկություններ**
Պղտորությունը
Համը
Հոտը
Գույնը
Նստվածք

**ԴԻՏԱՆՑՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

**ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

33. Օբյեկտներում պետք է իրականացվի դիտանցում մթնոլորտային օդը աղտոտող նյութերի արտանետման նկատմամբ:
34. Դիտանցում է իրականացվում մթնոլորտային օդ արտանետող բոլոր աղտոտող նյութերի աղբյուրների նկատմամբ, որոնց համար սահմանված են նորմատիվներ:
35. Իրականցվում է օդում կախված մասնիկների նմուշարկում, դրանց մեջ ծանր մետաղների պարունակությունը որոշելու համար:

**ԴԻՏԱՆՑՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ**
**ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

36. Հողերի դիտանցման ժամանակ պետք է որոշվի ծանր մետաղների,սուլֆատների պարունակությունը և չափվի hողերի թթվայնության pH ցուցիչը:
37. Հողերի աղտոտման գնահատման չափանիշ ընդունվում է աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի քանակները: Այդպիսիների բացակայության դեպքում աղտոտվածության մեծությունների համեմատությունը ֆոնային կամ հողային կլարկների մեծությունների հետ:

**ԴԻՏԱՆՑՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

38. Օբյեկտների հարակից տարածքներում պետք է իրականացվի դիտանցում բուսական աշխարհի կենսաբազմազանության նկատմամբ:
39. Բուսական աշխարհի դիտանցման նպատակը պետք է լինի ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների շրջակա միջավայրի և բուսական աշխարհի կենսաբազմազանության պահպանումը և կանխումը վտանգավոր ազդեցություններից:
40. Բուսական աշխարհի դիտանցումը ֆիտոինդիկացիոն մեթոդի վրա հիմված մշտական և պարբերական դիտարկումներ են բուսական աշխարհի օբյեկտների նկատմամբ, դրանց վիճակի և աճման միջավայրի գնահատման համար, ինչպես նաև զարգացման և փոփոխությունների ենթարկման կանխատեսումը՝ ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների ազդեցության հետևանքով:
41. Ընդերքօգտագորման թափոնների օբյեկտներում բուսական աշխարհի դիտանցումը իրականացնվում է հետևյալ ուղղություններով,

1) լեռնային  բուսականության դիտանցում,

2) մարգագետնային բուսականության դիտանցում,

3) ջրային բուսականության դիտանցում,

4) բույսերի և սնկերի պահպանվող (Կարմիր գրքում գրանցված) տեսակների դիտանցում,

5) ռեսուրսաձևավորող բույսերի (հատապտուղներ և սնկեր) դիտանցում,

6) անտառների դիտանցում,

7) ինվազիվ բույսերի դիտանցում:

42. Ընդերքօգտագործողները օբյեկտում բուսականության հանդեպ դիտարկումներն իրականացնում են՝ անվտանգ լցակույտերում չորս ամիսը մեկ անգամ, տարալվացման հարթակներից առաջացած լցակույտերում և պոչամաբարներում ամիսը մեկ անգամ:
43. Դիտանցման արդյունքում յուրաքանչյուր օբյեկտի համար ստեղծվում է բուսական աշխարհի տվյալների բազա՝ շտեմարան, որտեղ պարբերաբար գրանցվում են դիտարկման արդյունքները, ինչպես նաև տվյալ օբյեկտին յուրահատուկ բուսական աշխարհի տեսակների զարգացման և փոփոխման առանձնահատկությունները:

**ԴԻՏԱՆՑՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

**ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

44. Կենդանական աշխարհի դիտանցմանն օբյեկտ են հանդիսանում վայրի

կենդանիների հետևյալ տեսակները ՝ կաթնասունները, թռչունները, սողունները, ձկները, կրծողները, միջատները և այլ կենդանիներ, որոնք բնակվում են գետնում (մակերևույթում, հողում, ստորերկրյա դատարկություններում), մակերևութային ջրերում և մթնոլորդում ազատ բնական պայմաններում:

45. Դիտանցում իրականցվում է՝

1) Կարմիր գրքում գրանցված վայրի կենդանիների և դրանց ապրելու միջավայրի նկատմամբ,

2) միջազգային պայմանագրերի ազդեցության տակ գտնվող վայրի կենդանիների նկատմամբ,

3) որսի օբյեկտ հանդիսացող վայրի կենդանիների և դրանց բնական միջավայրի նկատմամբ,

46. Դիտանցման արդյուքնում պետք է ստացվի տեղեկատվություն հետևալի մասին՝

1) վայրի կենդանիների տարածվածության արեալի և բնակատեղերի մասին,

2) վայրի կենդանիների թվաքանակի մասին, այդ թվում Կարմիր գրքում գրանցված և միջազագային պայմանագրերի ազդեցության տակ գտնվողների,

3) վայրի կենդանիների առանձին տեսակների աճի դինամիկայի և կառուցվածքի մասին,

4) կենդանական աշխարհի վերատադրության գնահատման մասին,

5) վայրի կենդանիների ֆիզիկական վիճակի մասին:

47. Ընդերքօգտագործողները օբյեկտում կենդանական աշխարհի հանդեպ դիտարկումներն իրականացնում են տարեկան երկու անգամ:
48. Դիտանցման արդյունքում յուրաքանչյուր օբյեկտի համար ստեղծվում է կենդանական աշխարհի տվյալների բազա՝ շտեմարան, որտեղ պարբերաբար գրանցվում են դիտարկման արդյունքները, ինչպես նաև տվյալ օբյեկտին յուրահատուկ կենդանական աշխարհի տեսակների զարգացման և փոփոխման առանձնահատկությունները: